



# FAIR WORK WEEK LA



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Համաձայն Լոս Անջելեսի Արդար աշխատանքային շաբաթվա կանոնակարգին, աշխարհում 300 և ավելի աշխատող ունեցող մանրածախ առևտրի ձեռնարկությունների գործատուները պարտավոր են աշխատողների համար ապահովել արդար աշխատանքային շաբաթվա ստանդարտներ: Այս պահանջները վերաբերում են այն աշխատակիցներին, ովքեր աշխատում են առևձագն երկու ժամ որոշակի շաբաթվա ընթացքում Լոս Անջելես քաղաքում ապահովագրված գործատուի համար: Արդար աշխատանքային շաբաթվա կանոնակարգը ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 1-ից: Ծանոթանալու համար Արդար աշխատանքային շաբաթվա կանոնակարգի ամբողջական պահանջներին, խնդրում ենք ծանոթանալ Լոս Անջելեսի քաղաքային օրենսգրքի 18-րդ Գլուխի, 5-րդ Հոդվածի, 185-րդ բաժնին, և 8-րդ Հոդվածի, 188-րդ բաժնին:

## ԱՇԽԱՏԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ



### ԲԱՐԵՆԻՂԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Նախքան աշխատանքի ընդունելը, գործատուն պետք է յուրաքանչյուր նոր աշխատողի գրավոր ներկայացնի իրենց աշխատանքային գրաֆիկի բարեխիղճ գնահատականը: Գործող աշխատողների համար գնահատականը պետք է տրամադրվի աշխատողի խնդրանքից հետո տասը (10) օրվա ընթացքում:



### ՀԱՆԳԻՍՏ ՀԵՐԹԱՓՈԽՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Աշխատողը պարտավոր չէ աշխատել հերթափոխում, որը սկսվում է վերջին հերթափոխից 10 ժամից պակաս՝ առանց նրանց գրավոր համաձայնության: Անբավարար հանգստի ժամանակաշրջանից հետո աշխատողը ստանում է մեկուկես ժամանակի պրեմիում վճար որպես վարձատրություն հերթափոխի համար:



### ՀԵՐԹԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԾԱԾԿՈՅԹ

Աշխատողը պարտավոր չէ օրենքով պաշտպանված պատճառներով հերթափոխությունը կամ մասնակի հերթափոխությունը բաց թողնելու համար ծածկույթ գտնել:



### ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աշխատողը պետք է գրավոր ծանուցում ստանա աշխատանքային գրաֆիկի մասին՝ աշխատանքային շրջանի մեկնարկից առևձագն 14 օրացուցային օր առաջ: Աշխատողը կարող է հրաժարվել ցանկացած ժամից, հերթափոխից կամ աշխատանքի վայրի փոփոխություններից, որոնք կատարվել են նախապես ծանուցման վերջնաժամկետից հետո:



### ՊԱՀԱՆՋԵԼ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատողը կարող է նախապատվություն պահանջել ժամերի, ժամանակների կամ աշխատանքի վայրի համար: Առաջարկը կարող է հաստատվել կամ մերժվել գործատուի կողմից, որը գրավոր հիմնավորում կը ներկայացնի մերժման համար:



### ՀԵՐԹԱՓՈԽԻ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործատուն պետք է գործող աշխատակիցներին լրացուցիչ աշխատաժամեր առաջարկի, նախքան նոր աշխատողներ ընդունելը:



### ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄ

Աշխատողը իրավունք ունի կանխատեսելիության վճարի՝ գործատուի կողմից նախաձեռնված աշխատանքային գրաֆիկներում կատարված փոփոխությունների համար, որոնք կատարվել են աշխատանքային շրջանի սկզբից 14 օր առաջ: Որոշ բացառությունների դեպքում աշխատողները չեն հրաժարվում կանխատեսելիության վճարման իրենց իրավունքից, երբ նրանք կամավոր համաձայնում են նման փոփոխություններին:

Գործատուի նախաձեռնած փոփոխություն	Կանխատեսելիության վճարում
15 րոպեից ավելի ժամերի ավելացում	Մեկ (1) ժամ աշխատողի կանոնավոր վարձատրության չափով
Փոփոխություն ամսաթվի, ժամի կամ գտնվելու վայրի (բայց ոչ ժամերի փոփոխություն)	Մեկ (1) ժամ աշխատողի կանոնավոր վարձատրության չափով
Ժամերի կրճատում առևձագն 15 րոպեով	Չաշխատած ժամերը փոխհատուցվում են աշխատողի ժամավճարի կեսով
Կանչելով հերթապահություն, երբ գործատուն աշխատողին չի կանչում աշխատանք կատարելու	Չաշխատած ժամերը փոխհատուցվում են աշխատողի ժամավճարի կեսով

Լոս Անջելեսի Աշխատավարձի ստանդարտների գրասենյակը իրավասություն է տալիս Պայմանագրերի կառավարման բյուրոյին, Աշխատավարձի ստանդարտների գրասենյակին հետաքննություն անցկացնելու և պատիժներ և վարչական տոյժեր կիրառելու արդար աշխատանքային շաբաթվա կանոնակարգի խախտման համար:



Լոս Անջելեսի քաղաքային օրենսգրքի 17-րդ Գլխի, 5-րդ Հոդվածի, 185.12 Բաժինը և 8-րդ Հոդվածի, 8-րդ Բաժինը, պաշտպանում են աշխատակողներին ցանկացած խտրականությունից կամ վրեժխնդրությունից՝ արդար աշխատանքային շաբաթ ստանալու իրենց իրավունքների իրականացման համար:



Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել Աշխատավարձի ստանդարտների գրասենյակ՝ 1-844-WAGES LA (924-3752) հեռախոսահամարով կամ էլ. [wagesla@lacity.org](mailto:wagesla@lacity.org) հասցեով կամ այցելել <http://wagesla.lacity.gov/>.

Որպես Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների ակտիվ պաշտպանված անձ՝ Լոս Անջելես քաղաքը չի խտրականացնի Ձեր դեմ հաշմանդամության հիման վրա և, ըստ պահանջի, կտրամադրի ողջամիտ հարմարություններ՝ ապահովելու համար հավասար մատչելիությունն իր ծրագրերին, ծառայություններին և գործունեություններին: